



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ի սոստի. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 30 ԳՈՀՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ

Կը փառաբանեմ քեզ, Տէր, որովհետեւ զիս ազատեցիր,
եւ թոյլ չտուիր որ թշնամիներս խնդան իմ վրաս:
Տէր, իմ Աստուածս, քեզ օգնութեան կանչեցի եւ դուն զիս բժշկեցիր:
Ջիս մահուընէն ետ կեանքի բերիր,
երբ մահուան փոսը կ'իջնէի:
Տիրոջ ներքող երգեցէք, դուք՝ անոր հաւատարիմներ.
գոհաբանեցէք անոր սուրբ անունը:
Միայն վայրկեան մը կը տեսնէ անոր սաստիկ բարկութիւնը,
մինչդեռ անոր հաճութիւնը ամբողջ կեանք մը կը տեսնէ.
Ճիշդ ինչպէս որ իրիկուան հետ լացն ու արցունքը կը դադրին,
եւ առաւօպը կը բացուի ուրախութեամբ:
Լաւ օրերուս կը խորհէի՝ թէ ո՞րքա՞ն բան չի կրնար զիս սասանել:
Դուն է որ, Տէր, հաճութեամբդ
զիս լեռան պէս անշարժ ըրիր.
հազիւ երեսդ դարձուցիր՝ ահա խռովքի մարմուտեցայ:
Տէր, կ'աղաչեմ, կը պաղապիմ, Տէր:
Ի՞նչ կը շահիս իմ մահովս, եթէ գերեզման իջնեմ.
միթէ փոշի դառնալէ ետք կրնամ քեզ գոհաբանել,
կամ կրնամ պատմել հաւատարմութիւնդ:
Լսէ, ով Տէր, ողորմէ ինձի. Տէր, օգնական եղիր ինձի:
Ողբս պարի վերածեցիր, սուգի հագուստս հանեցիր,
եւ ինձի ուրախութեան զգեստս հագցուցիր,
որպէսզի ես քեզի ներքող երգեմ անդադար:
Տէր, իմ Աստուածս, յաւեր գոհութիւն քեզի:

ՇԱՐԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո՛ղ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո՛ղ արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ՏԻՐՈՋ ԶԱՅՆԸ ՓՈԹՈՐԻԿԻՆ ՄԷՋ

Հերաբրբրական է այս Սաղմոսին ոչ թե վերնագիրը, այլ ինչ բանի համար գրուած կամ նուիրումը ըլլալը: Տաճարի նաւակարիքին առիթով: Այսինքն՝ փաճարի շինութեան կամ անոր նորոգութեան փարեդարձի առիթով: Մենք գիտենք, որ փակաւին Աստուծոյ փաճարը շինուած չէր: Դաւիթ խոստացաւ շինել, բայց փակաւին ոչ: Կայ ուրիշ պարագայ մը, որ կը վերագրեն Դաւիթի փան, պալատի շինութեան իբրեւ իրեն բնակելի վայր: Այսինքն՝ պալատի շինութիւնը թէկուզ Դաւիթի համար, բայց այդ բոլորը նուիրելու Աստուծոյ փառքին: Մենք ալ յաճախ փուներ կը շինենք, կամ կնուզենք ունենալ, արդեօք այդ փունը որքանո՞վ Աստուծոյ համար նաեւ կնուզենք ընծայել: Որքան մեր բնակութեան համար, նոյնքան եւ, այդ փունը վերածելու փոքրիկ փաճարի, Աստուծոյ բնակութեան: Մէկ այլ ուրիշ առիթով մը Սաղմոսին մէջ կը կարդանք. «Եթէ Տէրը չշինէ փունը, գուր փեղ կը յոգնին զայն շինողները» (127:1): Ուրեմն, կը նշանակէ, թէ որքանով այդ փունը, մանաւանդ՝ այդ փան բնակիչները նուիրում են Աստուծոյ, իրենց կեանքը ընծայած են Աստուծոյ նախախնամութեան, Անոր առաջնորդութեան յանձնած: Այդ փան բնակիչները Աստուծոյ ողորմութեամբ եւ խաղաղութեամբ կ'ապրին: Այլապէս ինչ օգուտ ունի, երբ մեր փուները պալատներ ըլլան, բայց հոն չկայ սէր, միութիւն, համերաշխութիւն, իրարու նկատմամբ յարգանք ու յոգածութիւն, այլ կայ՝ կռիւ, անհամաձայնութիւն: Դուրսէն պալատ է, մարդիկ երբ փեսնեն կը զգանչանան, յաճախ նաեւ երանի կու փան, ըսելով. «Տես ինչ գեղեցիկ է, մեծ է, ով գիպէ քանի սենեակներ կան», բայց արդեօք կը հարցնենք, թէ այդ փան բնակիչները ինչպէս կ'ապրին:

1-3 հմր, ահա Դաւիթ գիտակցութեամբ կը փառաբանէ Տէրը, անդրդառնալով որ Տէրը Ինքն է զինք ազատողը, ու մանաւանդ՝ երբ Տէրը թոյլ չտուաւ որ թշնամիները խնդան իր վրայ: Կը յիշէք, քանի մը առիթներով իր վրայ կը խնդային ըսելով. «Ո՛րք է քու Տէր Աստուածդ»: Բայց ահա երբ ժամանակը կը հասնի, Աստուած կը միջամտէ եւ կը հասնի օգնութեան, եւ այնպէս մը որ նոյնիսկ թշնամիները ոչ թէ խնդան, այլ իրենք իսկ չկան այլեւս: Աստուած ոչ միայն օգնեց, ոչ միայն ազատեց, ոչ միայն մահուան փոսէն դուրս բերաւ, այլ նոյնիսկ մինչեւ իսկ թագաւորական գահին բազմեցուց: Այս փողերը յիշեցում են, նաեւ իւրաքանչիւր հաւատացեալ մարդուն, որ Աստուծոյ խոստումն է, իրականացած եւ իրականացուելիք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսով, որ ոչ միայն մեր աղօթքները կը լսէ, պիտի լսէ, ոչ միայն մեզ կը բժշկէ, կամ պիտի բժշկէ, այլ նոյնիսկ մեզ պիտի ժառանգորդներ դարձնէ երկինքի արքայութեան: Այլապէս ինչ է ու ինչ պէտք է ըլլայ սպասումն ու ակնկալութիւնը իւրաքանչիւր հաւատացեալին, եթէ Աստուծոյ արքայութեան ժառանգորդ պիտի չդառնանք: Աւերարանիչը յարակօրէն կը լսէ, Քրիստոս եկաւ Աստուծոյ արքայութեան աւերիսը փոխանցելու: Ան սորվեցուց Իր աշակերտներուն ըսելով. «Երբ կ'աղօթէք նախ Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք»: Տէրունական աղօթքը նոյն սպասումով եւ ակնկալութեամբ է որ կ'աղօթենք, Արքայութիւնդ թող գայ: Ահա Դաւիթի աղօթքը ոչ թէ միայն կը լսուի, այլ անոր պարասխանը կը ըլլայ, բժշկութիւն ստանալ: Այո, բժշկութիւն: Որովհետեւ մեր նեղութեան ու դժուարութեան մէջ, ոչ թէ միայն մեր մարմինները կը փառապին, այլ նաեւ մտքերն ու հոգիները կը խռովին, իրենց խաղաղութիւնն ու հանդարտութիւնը կը կորսնցնեն: Եւ ահա Դաւիթ կու գայ խոստովանելու, թէ Դուն զիս բժշկեցիր, ու զիս մահէն դէպի կեանք բերիր, երբ մահուան փոսը կ'իջնէի: Այսինքն՝ մեռելներու աշխարհ: Այս բոլորը միայն Աստուած է որ կրնայ ընել, ուստի այս բոլորին համար միայն Աստուծոյ սուրբ անունն է որ պէտք է փառաւորուի:

4 հմր, Դաւիթ կոչ կ'ուղղէ, որ նոյն փառաբանանքը նաեւ երկրի վրայ ապրող սուրբերն ալ ընեն, որովհետեւ այդ իսկ է մեր կոչումը: Երկինքի մէջ արդէն Աստուծոյ սուրբ անունը կը փառաբանուի, ինչու չէ նաեւ երկրի վրայ Անոր սուրբ անունը չփառաբանուի: Այն բոլոր բարիքներուն համար, որ ամէն օր, իրապէս ամէն օր առանց չափազանցած ըլլալու, մենք կը վայելենք, յաճախ անգիտակցաբար, որ այդ բոլոր բարիքները միայն կու գան ի վերուստ, Աստուծմէ:

5 հմր, այնքան հերաբրբրական է այս համարը, որ ցոյց կու տայ Աստուծոյ ողորմութիւնը հանդէպ Իրեն հաւատարիմներուն, որոնք եթէ յանկարծ այս կամ այն ձեւով բարկացնեն Տէրը, անոր բարկութիւնը միայն վայրկեան մը կը փեւէ, երբ անմիջապէս անդրադառնալով ապաշխարութեամբ Իրեն կը դիմենք, ու Իրեն կը վերադառնանք: Դաւիթ այս վիճակը կը նմանցնէ, եւ առաւել եւս այդ վիճակին մէջ կ'ըլլանք, երբ իրիկուան մեր լացն ու արցունքը՝ զոջումի, առաւօտեան ուրախութեան կը վերածուի: Այնպէս ինչպէս իրիկուան խաւարը այնքան ծանր կ'ըլլայ, բայց երբ առաւօտուն արեւուն շողերը կը սկսին դուրս գալու, այդ իրիկուան խաւարը կը սկսի փարափելու:

6-7 հմր, հերքերակա կիշեցում են, որ Դաւիթ կանդրադառնայ, որ իր լաւ եղած արեւնը կը մտածէր որ ոչ մէկ բան կայ կրնայ զինք սասանել, բայց այդ բոլորի ետին Աստուծոյ ներկայութիւնն է, Անոր առաջնորդութիւնն է, որովհետեւ այն պահուն որ Աստուած Իր երեսը կը դարձնէ, ահա այն արեւն խռովքի կը մատնուի: Այս համարները նաեւ զգուշացում են, որ չմոռնանք, որ եթէ ուրիշ բան մեզ չի կրնար սասանել, որովհետեւ Աստուած Ինք է որ մեզ կը պահէ: Յաճախ նաեւ այդ օրերը կրնան գալ, երբ երեւոյթներ այս անգամ մեզ սասանեն: Կարծելով որ անասան պիտի մնանք: Յաճախ այնպէս կը կարծենք, որ կեանքը միշտ ալ կանաչ է, արեւոտ, բայց եկուր տես, որ ձմեռն օրեր կան, եւ ահա այդ օրերը կրնան մեր անասանելի լեռը շարժել:

Ահա անոր համար ալ կ'աղաչէ ու կը պաղապի, որ Տէրը լսէ, ողորմի եւ օգնական ըլլայ իրեն 8-10 հմր: Այլապէս ինչ օգտակարութիւն ունի Դաւիթի մահը, որովհետեւ անոր մահէն ետք, կարելի չէ Աստուծոյ գոհութիւն տալ: Որովհետեւ փոշի դարձաց մարդը չի կրնար զԱստուած փառաբանել, կամ Անոր զգանչելի գործերուն մասին վկայութիւն տալ:

11-12 հմր, աւարտին անգամ մը եւս կու գայ խոստովանելու եւ շնորհակալութիւն յայտնելու, ու անդրադառնալու, որ Աստուած ողբը ուրախութեան վերածեց, սուգի հագուստը վրայէն հանեց, եւ ուրախութեան զգեստը հագցուց: Ահա այս բոլորը նաեւ կարարուեցան, ու կը կարարուին, երբ ամէն անգամ Քրիստոսի կը վերադառնանք մեր ցնցոյթներով, այնպէս ինչպէս անառակ որդին: Հետեւաբար, մեղքին պատճառով սուգը, փրփումները, խեղճութիւնը, Քրիստոսի պարարագումով, Անոր սուրբ արեան հեղումով, ուրախութեան վերածուեցաւ, ու այդ ցնցոյթները ուրախութեան պարմուճանի: Անառակ որդիին հայրն ալ հանել փուտ ալ չի ցնցոյթները, եւ ուրախութեան պարմուճան հագցնել փուտ, մարին մարանին, կօշիկները ոտքին, եւ լաւագոյն զուարակը ուրախութեան եւ խնճոյքի: Ահա այս բոլորին համար Աստուծոյ ներքող երգելու, Անոր սուրբ անունը փառաբանելու ոչ միայն ժամանակաւորապէս, այլ յաւիտենապէս: